ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Կերպարվեստի դասավանդման մեթոդիկա

Թեմա՝ ,,Կերպարվեստ,, ուսումնական առարկայի կրթական նշանակությունը և հիմնանպատակները

Հետազոտող՝ Աստղիկ Աղեկյան

Ղեկավար՝ Լ. Իսկոյան (մանկ. գ.թ. ,դոցենտ)

ԵՐԵՎԱՆ 2022

,,Կերպարվեստ,, ուսումնական առարկայի կրտական նշանակությունը Եվ հիմնանպատակները

Արդի հասարակության ամենավտանգավոր և հրատապ լուծում պահանջող հիմնահարցերից է հոգևոր ճգնաժամը : ՈՒստի մանկավարժության գերխնդիրն է դառնում մատաղ սերնդի հոգևոր կերպարի, կյանքի նկատմամբ ոչ անտարբեր, ստեղծագործ վերաբերմունքի ձևավորումը:

Բոլորովին չնվազեցնելով մայրենի լեզվի կամ մաթեմատիկայի նշանակությունը, որոնց ավանդաբար հատկացվում է արտոնյալ կարգավիճակ

պետք է, այնուամենայնիվ, խոստովանենք որ այդ առարկաներն ի վիճակի չեն գեղագիտորեն լիարժեք ձևավորված անձ դաստիրակել, չնայած անկասկած, դրանք ձևավորվում են մարդուն անհրաժեշտ որոշակի հատկանիշներ: Այն, ինչ մենք անվանում ենք հոգևոր կյանք, ներաշխարհի հարստություն, գտնվում է գեղագիտական ցիկլի առարկաների ազդեցության ոլորտում: Ակնհայտ այս փաստի անտեսումը մանկավարժական աններելի սխալ է:

Իրենց բովանդակության և յուրահատկության շնորհիվ արվեստներն ընդհարապես և կերպարվեստը՝ հատկապես, լավագույն կերպով բացահայտում են մարդու և շրջապատող ողջ աշխարհի գեղեցկությունն ու ներդաշանակությունը: Իսկ գեղեցիկը, ներդաշնակը տեսնելու պահանջը վերածվում է այն ստեղծելու ցանկության: Արվեստի հետ շփումը հարստացնում է մարդուն գեղեցիկի, բարության, ճշմարտության, ճանաչման համամարդկային փոռով՝ դարձնելով այն սեփական կյանքի փորձ:

Ցանկացած գեղարվեստական գործողությոամբ զբաղվելը ինքնաարտահայտման անսպառ հնարավորություն է ընձեռում և, վերջապես,մեծագույն հաճույք է պատճառում մարդուն:

Հանրակրտական դպրոցում գեղագիտական դաստիարակության նկատմամբ վերաբերմունքը փոխելու, նրա դերն ու նշանակությունը ճիշտ գնահատելու և բարձրացնելու ուղղությամբ որոշակի քայլեր ամրագրվեցին հանրակրթության պետական կրթակարգում և արտացոլվեցին առարկայական չափորոշիչներում և ծրագրերում: Կերպարվեստն այսուհետ ուսուցանվում է 1-7-րդ դասարաններում, ավելացել է ժամաքանակը, վերանայվել և բարձացվել են պահանջները:

Ներկայացնենք նշված մոտեցումները՝ ընդհանրացված և համառոտ կերպով մեջբերելով առարկայական ծրագրի որոշ դրույթներ:

Կերպարվեստի տարբեր տեսակներին հաղորդակցվելը և ինքնուրյուն գեղարվեստական գործունեություն իրականացնելը նպաստում է՝

- Իրականության գիտակցական և զգայական ընկալման ձևավորմանը,
- Վերլուծական և ստեղծագործական մտածողության զարգացմանը,
- Անձի ինքնաճանաչմանը, ինքնաարտահայտմանը և մտահորիզոնի ընդլայմանը,

- Սովորողների գեղարվեստական կրթությանը, գեղագիտական և բարոյական դաստիրակությանը,

- Ազգային-հայրենասիրական և մարդասիրական զգացումների, բնապաշտության արմատավորմանը:

,,ԿԵՐՊԱՐՎԵՍՏ,, ԱՌԱՐԿԱՅԻ ՀԵՆՔԱՅԻՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑՈՒՄ

Կերպարվեստի ուսուցումն իրականացվում է հետևյալ ոլորտներով և հենքային բովանդակությամբ.

ԳԾԱՆԿԱՐ - Իրականության ընկալման և գրաֆիկական եղանակով պատկերման

Հիմնական միջոց է: Հանդիսանում է տեսողական արվեստի արտահայտման

բաղկացուցիչը:

ԳՈՒՆԱՆԿԱՐ - Շրջապատող իրականության գունային բազմազանության, հարստության և ներդաշնակության ընկալման և պատկերման միջոց է:

Պատկերվող օբյեկտների կառուցվածքի, ձևի, ծավալի, գծային և գունային հեռանկարչության, լուսարվեստի և կոմպոզիցիայի տարրական հիմունքների ուսումնասիրում և ձեռք բերված գիտելիքների գործնական կիրառում:

ԴԵԿՈՐԱՏԻՎ - ԿԻՐԱՌԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ - Ժողովրդական արհեստների ժամանակակից դեկորատիվ-կիրառական արվեստների հոգևոր և նյութական արժեքների ճանչման միջոց է:

Ծանոթություն ազգային և արտասահմանյան ժողովրդական արհեստների և ժամանակակից դեկորատիվ-կիրառական արվեստների տեսակների, դրանց առանձնահատկությունների և ստեղծագործությունների հետ: Թղթյա կերպարվեստ: Դեկորատիվ աշխատանք թելերով, գործվածքով և բնական նյութերով: Դեկորատիվ նկարչություն:

ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ - Կերպարվեստի բնագավառից տեսական գիտելիքների ձեռքբերման և ընդհանուր
աշխարհայացքի ընդայլման միջոց է:

Կերպարվեստի տեսակները, դրանց բազմազանությունը, փոխկապակցվածությունը և դերը մարդու կյանքում: Կերպարվեստի ժանրերը: Տեղեկություններ հայկական և համաշխարհային կերպարվեստի հանրահայտ արվեստագետների և նրանց ստեղծագործությունների մասին:

Գծանկարի, գունանկարի, ԴԿԱ-ի և կերպարվեստի տեսության ու պատմության ուսուցման կրտսեր դպրոցում կատարվում է միմյանց հետ փոխակապակցված բնօրինակից և թեմատիկ պատկերման, դեկորատիվ-կիրառական գործունեության և կերպարվեստի մասին զրույցների միջոցով:

Դասի Պլան - կոնսպեկտ

Առաջին դասարանի համար

ԴԱՍԻ ԹԵՄԱՆ - Դեկորոտիվ աշխատանք ,,Նախշեր,, / կետերի միացում և գունավորում /

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ -Սովորեցնել աշխատել համբերատար, ուշադիր և մաքուր

Հիշել գծային վարժություններով ինչ երկրաչապական պատկերներ կարող ենք ստանալ կամ 1-2 պատկերներով ստանալ նոր պատկերներ.

Ճիշտ արտանկարել և գունավորել օրինակից պահպանելով հաջորդականությունը.

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

1. Կազմակերպչական մաս /1-5 րոպե/
2. Նոր նյութի հաղորդում

- Աշխատանքային տետրում պատկերված կետային օրինակի վրա սովորեցնել կառուցել տվյալ առաջադրանքը:

- Գրատախտակի կատարել նկարչական տետրի կետային օրինակը, որպեսզի առաջադրանքը լավ կիրառեն և ճիշտ կատարեն նկարչական տետրում:
- Ֆիզկուլտ դադար /1-5 րոպե/
- Գործնական աշխատանք /20-25 րոպե/
- Դասի ամփոփում փնտրել առավել հաջողված աշխատանքները ցուցադրել, խրախուսել /ուրախ սմայլիկներով/

Դասի Պլան - կոնսպեկտ

Երկրորդ դասարանի համար

ԴԱՍԻ ԹԵՄԱՆ - Թեմատիկ աշխատանք ,,Զարմանալի Տերևները,,

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Ցույց տալ երեխաներին տարբեր, բնական տերևներ:
2. Նկարագրել կառուցվածքը,աշնանային տերևները ինչ գույներեն լինում **/խառնուրդով/**

ԴԱՍԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄԸ - Բնական տերևներ Ա4 ֆորմատի վրա կատարված տերևներով աշխատանք, Տերևներով պատկերված նկարներ ցուցադրելու և պատկերացում ունենալու համար և ճիշտ տեղադրելու թղտի վրա:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

1. Նոր դասի բացատրում:
2. Գրատախտակին նկարել տերևների օրինակներ:
3. Աշակերտի ինքնուրյուն աշխատանք:
4. Ֆիզկուլտ դադար:
5. Ուսուցչի կողմից անհատական և ընդանուր աշխատանքի դրսևորում երեխաների հետ:
6. Դասի ամփոփում ՝ ցուցադրել հաջողված, հետաքրքիր կատարված աշխատանքները և գնահատել

Դասի Պլան-կոնսպեկտի օրինակ

երրորդ դասարանի համար

Դասի թեման.

,,Աշնան հյուր,, թեմատիկ նկարչություն: Ծանոթացում կերխպարվեստի Ստեղծագործությունների հետ և զրույց շրջակա գեղեցկության մասին:

Դասի նպատակը և խնդիրները.

1. Ցույց տալ երեխաներին աշնան գեղեցկությունը գեղանկարչության մեջ, նշանավոր նկարիչների ստեղծագործություններում:

2. Երեխաների կերպարային հիշողության, հուզական-գեղագիտական վերաբերմունքի հետագա զարգացում:

3. Երեխաների մեջ ձևավորել ինքնուրյուն թեմատիկ նկար ստեղծելու կարողություն, հետևողականորեն նկարել՝ ըստ ընտրած թեմայի

4. Կերպարվեստի և հարակից առարկաների միջև միջառարկայական կապերի իրականացում՝ երաժշտության ունկնդրում **,,Աշնան երգ,,** բնության դիտարկում՝ մայրենի լեզվի և աշխատանքի ուսուցման դասերի թեմաների հետ կապված **/աշնանային տերևներ/** :

Դասի կահավորումը.

Թղթեր, մատիտներ, ջրաներկ և գուաշ, մոմակավիճներ, վրձիններ, ջրամաններ, ռետին, փորձաթղթեր, ,,Աշնանային երգ,, ձայնագրություններ, վերատպություններ և շարժանկարներ Սարյանի, Լևիտանի, Առաքելյանի նկարների վերատպություններից, հավաքածու՝ աշնանային տերևներ:

Դասի ընթացքը.

Ա) նոր դասի բացատրություն,

Բ) ,,Աշուն,, թեմայով երևակայական նկարչություն,

Գ) վերատպությունների ցուցադրում և վերալուծում,

Դ) երաժշտության ունկնդրում,

Ե) դպրոցականների ինքնուրյուն աշխատանք՝ պատկերվող թեմայի կոմպոզիցիայի ընտրությու և գծանկարի կատարում,

Զ) ջրաներկով կամ գուաշով աշխատելու եղանակների հիշեցում,

Է) ներկերով և վրձինով աշխատելու վարժություններ,

Ը) աշակերտների ինքնուրույն աշխատանք գույներով

Թ) ուսուցիչ կողմից անհատական և ընհանուր աշխատանքի դրսևորում երեխաների հետ,

Ժ) ուսումնական խնդրի կատարման արդյունքների ամփոփում, մանկական աշխատանքների կոլեկտիվ քննարկում: